

5.10. ԳՅ հիդրոտեռոլոգիական բնութագիրը 2000թ. 2-րդ կիսամյակում

Ըստ ԳՅ հիդրոտեռոլոգիական բնութագրի վարչության ամփոփ տեղեկատվության, 2000թ. 2-րդ կիսամյակի տաք ժամանակահատվածի բնութագրական առանձնահատկությունը չոր և շոգ ամառն էր: Հատկապես շոգ եղանակ է գրանցվել հուլիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի առաջին տասնօրյակը, երբ օդի առավելագույն ջերմաստիճանը հանրապետության մի շարք տարածաշրջաններում հասել է բազմամյա դիտարկումների առավելագույն արժեքներին, իսկ առանձին վայրերում այդ արժեքները գերազանցվել են: Այդ ժամանակահատվածում երաշտ է արձանագրվել և մթնոլորտում, և հողի մակերևութին, ստեղծվել են անբարենպաստ պայմաններ գյուղատնտեսական կուլտուրաների աճի և զարգացման համար:

Օգոստոս ամսին գետերում միջին ամսական ելքերը կազմել են միջին բազմատարյան նորմայի 40-50%-ը: Սեպտեմբեր ամսին առանձին շրջաններում /Գեղարքունիքի մարզի առանձին շրջաններում, Լոռու մարզում, Ամասիայի և Գորիսի տարածաշրջաններում/ 1-3 օր տևողությամբ դիտված տեղումները նպաստել են հողում խոնավության որոշակի պաշարների կուտակմանը:

Հոկտեմբեր ամսին տեղումների սակավություն է դիտվել միայն Սյունիքի և Տավուշի մարզերի առանձին վայրերում և Արարատյան դաշտի մախալեռներում: Հանրապետության մի շարք տարածաշրջաններում տեղումների միջին ամսական նորման գերազանցվել է 23-65%-ով, իսկ Լոռու մարզում՝ 2 անգամ:

Հանրապետության ողջ տարածքում առատ տեղումներ դիտվել են հոկտեմբերի 20-22-ը.

- Տաշիրում դիտվել է անձրև 29 ժամ տևողությամբ, տեղումների քանակը՝ 42 մմ, կոտրվել են ծառեր, վնասվել են կապի և էլեկտրահաղորդման գծեր,
- Վանաձորում՝ 12 ժամ տևողությամբ ձյուն և անձրև, տեղումների քանակը՝ 23 մմ,
- Ստեփանավանում՝ 24 ժամ տևողությամբ ձյուն և անձրև, տեղումների քանակը՝ 39 մմ,
- Պուլկիմի լեռնանցքում՝ 12 ժամ տևողությամբ ձյուն և անձրև, տեղումների քանակը՝ 20 մմ,
- Հրազդանում՝ 12 ժամ տևողությամբ ձյուն և անձրև, տեղումների քանակը՝ 21 մմ:

Հոկտեմբերի 26-ին Աշոցքում տեղացել է ուժեղ անձրև 12 ժամ տևողությամբ, տեղումների քանակը՝ 33 մմ:

Նոյեմբեր ամսին աչքի է ընկել տեղումների սակավությամբ: Ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 10-35%-ը: Նորմայից 3 անգամ ավելի տեղումներ են գրանցվել Գորիսում՝ 69 մմ: Միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմային մոտ, Գորիսի տարածաշրջանում՝ նորմայից ցածր 2^o-ով:

Դեկտեմբեր ամսին ջերմաստիճանը նորմայից տաք է եղել 2^o-ով: Ամսվա առաջին կեսին գերակշռել է տաք, առանց տեղումների եղանակ, երկրորդ կեսին ցրտել է, ամենուրեք դիտվել են տեղումներ՝ առավելապես ձյան տեսքով: Դեկտեմբերի 17-ին Տաշիրում քամու արագությունը հասել է 25 մ/վրկ-ի: Դեկտեմբերի 20-ին Ապարանում 21 ժամ տևողությամբ տեղացել է 28 սմ ձյուն, դեկտեմբերի 22-ին ձյան շերտի բարձրությունը հասել է 75 սմ-ի, եղել է գետնաբուք: Ստեփանավանում ձյան շերտի բարձրությունը հասել է 49 սմ-ի, Տաշիրում՝ 45 սմ, Ջերմուկում և Հրազդանում՝ 35-36 սմ, Սևանի ավազանում՝ 14-15 սմ: Դեկտեմբերի 26-ին ոչ շատ բարձր ձյան ծածկ է առաջացել Արարատյան դաշտում, Եղեգնաձորում: